

2015թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու
կանխատեսումը ՀՀ-ում

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը
1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2015թ. - 31.12.2015թ.

Թեմայի ղեկավարը

Տիգրանյան Իշխան Տաճատի

տ.գ.թ., պրոֆեսոր

Թեմայի մասնակիցներ

1. Հովհաննիսյան Հայկազ Սուրենի- գիտաշխատող
2. Վարդանյան Քնարիկ Ջոնիկի - գիտաշխատող
3. Ավագյան Գայանե Արամի - գիտաշխատող
4. Տիգրանյան Վարսիկ Իշխանի -գիտաշխատող
5. Մխիթարյան Լուսինե Կարենի - գիտաշխատող
6. Սուրադյան Լուսինե Վարուժանի- գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Վերջին տարիների ՀՀ տնտեսական աճի դանդաղեցման պատճառներն առանձին հետազոտության կարիք ունեն։ Մասնավորապես անհրաժեշտ է ուսումնասիրել ամբողջական պահանջարկը ձևավորող տարրերը և դրանց վրա ազդող այնպիսի գործոնների փոփոխությունների պատճառները, ինչպիսիք են սպառման կառուցվածքը, խնայողությաունները ներդրումների վերաձեղումը մեխանիզմները, պետական ծախսերի արդյունավետությունը և վճարային հաշվեկշռի բարելավման ուղիները։

Պահանջարկի տեսանկյունից տնտեսական աճի խթանման համար կարևորվում են հատկապես սպառման կառուցվածքի ուսումնասիրությունները։ Բանը նրանում է, որ եթե սպառումն ավելանում է ի հաշիվ ներմուծվող ապրանքների, ապա այդ աճը կարող է չեզոքացվել առևտրային և վճարային հաշվեկշռի վատթարացմամբ։ Այստեղից առաջանում է ևս մի հիմնախնդրի ուսումնասիրման անհրաժեշտություն՝ սպառման կառուցվածքի փոփոխությունները ըստ բնակչության տարբեր եկամուտներով խմբերի։

Ենթադրվում է, որ ցածր եկամուտներով խմբերում պահանջարկի ավելացումը պետք է խթանի տեղական արդյունաբերության զարգացումը: Միաժամանակ լուծվում է ՀՀ տնտեսության զարգացման համար խիստ կարևոր ևս մի հիմնախնդիր՝ աղքատության բարձր մակարդակի հաղթահարումը: Ուստի անհրաժեշտ է տեսական այս թեզը հիմնավորել փաստացի հետազոտություններով: Քանի որ սպառման խթանման նպատակով իրականացվող հարկաբյուջետային միջոցառումները ունեն կարճատև բնույթ, անհրաժեշտ է հետազոտել դրանց կիրառման նպատակահարմարությունը ներկայումս կիրառվող մեխանիզմներով: Տեսականորեն, երկարատև տնտեսական աճի ապահովման տեսակետից, դրանք ունեն բացասական հետևանքներ, քանի որ դուրս են մղում ներդրումները:

Աղքատության հաղթահարման տեսանկյունից աշխատանքում կարևորվում են աշխատանքի շուկայի ուսումնասիրությունները: Գործազրկության շարունակական բարձր և զբաղվածության ցածր մակարդակները արգելակում են տնտեսական աճը, իսկ այդ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական թերությունները թույլ չեն տալիս ճիշտ արտացոլել իրականությունը:

Մյուս կարևոր ուղղությունը ներդրումների կրճատման պատճառների ուսումնասիրությունը և դրանց օպտիմալ կառուցվածքի հնարավորինս ճշգրտումն է: Հատկապես կարևորվում են ներքին աղբյուրների հաշվին ներդրումների ընդլայնման, խնայողությունները ներդրումների վերածելու մեխանիզմների հետազոտությունները: Այդպիսի մեխանիզմների մշակումը թույլ կտա դադարեցնել կապիտալի արտահոսքը և թուլացնել տնտեսության կախվածությունը գործուսուցիչ եկամուտներից ու դրամական փոխանցումներից:

Ընդհանուր առմամբ համաաշխարհային, մասնավորապես եվրոպական տնտեսության պահպանվող թուլության կոնտեքստում (2011 թ. Հայաստանի արտահանման 45 տոկոսը բաժին էր ընկնում ԵՄ երկրներին) կարելի էր սպասել տնտեսական աճի տեմպերի նվազում: Տնտեսության աճի դանդաղումը կարող է պայմանավորվել մետաղների և հանքաքարի միջազգային գների անկումով: 2011 թ. այս ապրանքախմբերը կազմել են արտահանման 47 տոկոսը: Տնտեսության թուլացման միտումներ են նկատվում նաև Ռուսաստանի դաշնությունում, որը հանդիսանում է դրամական փոխանցումների և ուղղակի օտարերկրյա ներդրումների հիմնական աղբյուր: Համապատասխանաբար գոյություն ունի ներքին պահանջարկի թուլացման լրացուցիչ ռիսկ, ինչպես սպառողական՝ պայմանավորված դրամական փոխանցումներով, այնպես էլ ներդրումային, որը ճգնաժամից հետո մնում է ցածր մակարդակի վրա:

ՀՆԱ աճի տեմպերի դանդաղումը և արտահանման գների նվազումը կարող է ազդել արդյունաբերության արտահանող ճյուղերի վրա, որն էլ իր հերթին կազդի արտահանման և ֆիսկալ եկամուտների վրա՝ վերջին հաշվով խախտելով մակրոտնտեսական կայունությունը:

Համաշխարհային տնտեսական աճի բացասական միտումները կարող են անդրադառնալ Հայաստանի տնտեսության վրա հետևյալ եղանակների կամ դրանցից որևէ մեկի միջոցով.

- Գործընկեր երկրների տնտեսական աճի դանդաղեցման տեմպերը Հայաստանի վրա կազդեն արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև մետաղի գնի շարունակական նվազմամբ, ինչը կհանգեցնի Հայաստանի արտահանման աճի դանդաղեցմանը՝ նվազեցնելով ՀՆԱ-ի աճի տեմպերը,
- Ռուսաստանի տնտեսական աճը կարող է դանդաղել՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող բացասական երևույթներով և երկրի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով: Դեպի Հայաստան կապիտալ ներդրումների հոսքի արդյունքում գործոնային եկամուտները և դրամական փոխանցումները կնվազեն, ինչը կհանգեցնի ՀՆԱ-ի աճի տեմպերի ավելի ցածր մակարդակի, քան ներկայացված է ծրագրում,
- Միջնաժամկետ հեռանկարում ներմուծվող էներգակիրների գների հնարավոր աճը կհանգեցնի Հայաստանի գործարար շրջանների ծախսերի աճին, ինչը զսպող գործոն կհանդիսանա թողարկման և, հետևաբար, ՀՆԱ-ի աճի տեմպի համար:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

ՀՀ-ի համար հատկապես կարևոր է պահանջարկի ուսումնասիրությունը և արտահանման հնարավորությունների բացահայտումը, քանի որ վերջինս բնութագրվում է փոքր ներքին շուկայով և ներմուծումը ավելի քան երեք անգամ գերազանցում է արտահանմանը: Ամբողջական պահանջարկի խթանման ցանկացած փորձ ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորում է ներմուծումը: Այս տեսանկյունից կարևորվում է.

- արտահանելի և ոչ արտահանելի ոլորտների բացահայտումը,
- արտահանման լրացուցիչ հնարավորությունների գնահատումը,
- արտահանման և ներմուծման կառուցվածքի վերլուծությունն ու ներմուծման փոխարինման հնարավորությունների բացահայտումը,
- փոխարժեքի ազդեցության գնահատումը զուտ արտահանման վրա:

Առավել մանրամասն հետազոտության է ենթարկվելու տնտեսության արտաքին հատվածը: Քանի որ այս ոլորտում զարգացումները սերտորեն կապված են արտասահմանյան երկրներում տեղի ունեցող զարգացումների հետ:

Արտաքին հատվածի քննարկումները սկսվելու են տնտեսության արտաքին կայունության գնահատման մեթոդական հարցերից: Վերջին տասնամյակների արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտաքին անհաշվեկշռվածությունը հանգեցնում է լուրջ մակրոտնտեսական ռիսկերի: Վճարային հաշվի մեծ պակասուրդ ունեցող երկրները ավելի դժվար են հաղթահարում տնտեսական ճգնաժամը:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Արտաքին անհաշվեկշռվածության պատճառ կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: Արտաքին գործոններից ամենակարևորներն են համարվում առևտրի պայմանների և համաշխարհային տոկոսադրույքների փոփոխությունները: Ներքին գործոններից են, օրինակ տնտեսվարող սուբյեկտների և բնակչության չափազանց լավատեսական սպասումները, որը ճգնաժամի նախօրեին շատ երկրներում հանգեցրեց հիպոթեկային վարկավորման կտրուկ աճի և ընթացիկ հաշվի պակասուրդի մեծացման: Մի շարք հեղինակների հրապարակած հետազոտություններում բացահայտվել է նաև քանակական կապ հարկաբյուջետային քաղաքականության և արտաքին անհաշվեկշռվածության միջև: ՀՆԱ նկատմամբ բյուջեի պակասուրդի աճը հանգեցնում է ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցության կրճատման:

Հետազոտության ընփացքում՝ հաշվի առնելով տեսական այս դրույթները, կատարվելու է տնտեսության արտաքին հատվածի համալիր վերլուծություն, ներառելով նրա առանձին ուղղությունները:

Այս առումով հետազոտվելու է արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը և ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը ըստ երկրների: Հաշվի առնելով, որ արտահանման մեծ բաժինը և որակական մասը ապահովում են մի քանի ապրանքախմբեր, գնահատվելու է այդ ապրանքախմբերի վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցության չափը:

Ապրանքային հաշվեկշռի բացասական մնացորդը կարելի է համարել արտաքին հատվածի ամենագլխավոր հիմնախնդիրը, քանի որ, այն խախտում է արտաքին կայունությունը, իսկ ընթացիկ հաշվի մշտական բացասական մնացորդը լարվածություն է առաջացնում խնայողությունների ձևավորման և դրանք ներդրումներին ուղղելու գործընթացում, որը տնտեսական աճը ապահովելու հիմնական ուղին է:

Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ-ում երկար ժամանակ ռեսուրսները ուղղվելով չարտահանվող ճյուղերի զարգացմանը (շինարարություն, սպասարկման ոլորտ),

արտահանվող արտադրանքի ներքին պահանջարկը հնարավոր է եղել ապահովել միայն դրանց ներմուծման ավելացման հաշվին: Դա իր հերթին աստիճանաբար մեծացրել է երկրի արտաքին պարտքը, քանի որ ընդհանուր առմամբ երկրում սպառվող ապրանքների ծավալը գերազանցել է դրանց արտադրության ծավալին:

Վճարային հաշվեկշռի հետ սերտորեն կապված է նաև ՀՀ միջազգային ներդրումային դիրքը, որն արտացոլում է տնտեսության արտաքին ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարները: Ուստի կատարվելու են հետազոտություններ նաև այս ուղղությամբ:

Հետազոտության նախորդ փուլերումում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ տնտեսությունը խիստ զգայուն է փոխարժեքի տատանումների նկատմամբ: Այս առումով բացահայտվելու է փոխարժեքի տատանումների ազդեցությունը տնտեսական աճի, զբաղվածության և վճարային հաշվեկշռի առանձին բաժինների վրա:

Իրական արդյունավետ փոխարժեքի և վճարային հաշվեկշռի առանձին հաշիվների հետ կապը հիմնավորելու նպատակով հետազոտության նախորդ փուլերում ստացված արդյունքների օգնությամբ գնահատվելու է իրական արդյունավետ փոխարժեքի և վճարային հաշվեկշռի առանձին հաշիվների կապը, պարզվելու է, թե իրական արդյունավետ փոխարժեքի տատանումները ինչ չափով են բացատրում վճարային հաշվեկշռի առանձին հաշիվների տատանումները:

Հետազոտության արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված մենագրություն, գիտական հոդվածներ և զեկուցումներ գիտաժողովներում: